Պարարտանյութի այդ ձևը կոչվում է կոմպոստ: Դո-  
մաղբով և կոմպոստով պարարտացումը ուժեղ կերպով  
բարձրացնում է բամբակի բերքատուությունը, սակայն  
Անդրկովկասի բամբակացան շրջաններում գոմաղբը և  
կոմպոստը չեն կարող բավականացնել բոլոր բամբա-  
կի դաշտերին:

Այդ պատճառով, առաջներում բամբակ ցանած  
դաշտերի սննդանյութերի պաշարը լրացնելու համար  
անհրաժեշտ է պարարտացնել նրան հանքային նյու-  
թերով, այսինքն գործարաններում արհեստական կեր-  
պով պատրաստված դանազան քիմիական նյութերով:

Այդ բոլոր նյութերից Անդրկովկասի բամբակի  
դաշտերի պարարտացման համար ոգտակար են տյն-  
պիտի նյութեր, վորոնք իրենց մեջ մեծ քանակությամբ  
պարունակում են ազոտ և լուսածին (ֆոսֆոր):

Փորձադաշտերի սովյալների համաձայն, վորոնք  
լերկար տարիների բնթացքում փորձել են պարարտա-  
նյութերի տարբեր խառնուրդները աղտաի լուրաքան-  
չյուր կիլոգրամից, փորով պարարտացվում է հողը  
ստացվում է բամբակի—հուժքի ամում 6 կիլոգրամ: Յե-  
թե որինակի համար 1 հեկտար բամբակի ցանքը պա-  
րարտացնել 60 կիլոգրամ ազոտով, ապա բերրի աճու-

մը կատացվի 360 կիլոգրամ (23 փութ): Ազոտային  
պարարտանյութերը գործադրվում են վորպես սալ-  
պետ, ծծմբաթթվային ամոնիում և ցիանամիդ-կալ-  
ցիում, իսկ ֆոսֆորականը՝ սուպերֆոսֆատի ձևով:

Պարարտանյութերի խառնուրդները պատրաստ-  
վում են բամբակային կոմիտեների կողմից և արտո-  
նյալ պայմաններով բաց թողնվում բամբակ ցանող-  
ներին: Ամեն մեկ բամբակ ցանող գյուղացի և կույ-  
խոգնիկ պետք է լավ ճիշի, վոր հողի պարարտացումը  
լավ բերք կարող է տալ միայն այն դեպքում, յիթե  
թե հողի մշակութունը, թե ցանքը և թե բույսի  
խնամքը կիսատարվի ճիշտ և կանոնավոր: Հակառակ  
դեպքում պարարտացումը վաճ մի ոգուտ չի կարող  
բերել:

Յեթե, որինակի համար, պարարտացված բամ-  
բակի դաշտը իր ժամանակին չքաղհանել, այդ դեպ-  
քում մոլախոտերը բարձրանալով ավելի ուժեղ կերպով  
կիտնդարեն բամբակի աճմանը քան թե չպարարտաց-  
ված հողում, վորովհետև պարարտացված հողում մոլա-  
խոտերը նույնպես լավ են աճում:

Նմանապես յիթե հողը վատ է վարած, ապա պա-  
րարտացումը չի տալ այն ոգուտը, վորը կտար լավ  
վարի դեպքում, վորովհետև բամբակի թփի արմատ-  
ների դարդացման համար բարենպաստ պայմաններ  
չեն լինի:

Բամբակ ցանողներից շատերը հաճախ մոռանում  
են այդ կանոնները և կարծում են, թե պարարտացու-  
մը բամբակի դաշտին վաճ մի ոգուտ չի բերում:

Դոմաղբը և կոմպոստը պետք է դաշտը հանել  
աշնանը աշնանավարից (ցեղից) առաջ:

Հանքային պարարտացումը պետք է կատարել



ցանքից առաջ, ուսկայն նախադանքային աջաթից հետո, վերոյիւնեալ ջրելու ժամանակ հանքային աղերը կլուծվեն ջրի մեջ և կտնցան հողի խորքը, վորտեղ բույսի արմատները չեն հասնում:

Դոմադրի պարարտացումը բերքատուութեան վրա ազդում է 3-4 տարվա ընթացքում, իսկ հանքային պարարտացումը առաջին և հետևյալ տարիներում:

Կասկած չկա, վոր բամբակի բերքատուութեան բարձրացման համար գործադրվող բոլոր միջոցներից, պարարտացման կիրառումը ամենից կարևորն է: Պարարտացման ճիշտ կատարելու, հողի լավ մշակելու և ցանքին հետևելու դեպքում բամբակի բերքատուութունը միմիայն պարարտացումից կարող է բարձրանալ ավելի քան յերկու անգամ:

Բացի դոմադրի և հանքային պարարտացումից ոգտակար է նաև կանաչով պարարտացնելը:

Իրա համար, այն հողամասերում, վորոնք հատկացրած են բամբակի համար և վորոնք արդեն ազատված են աշնանացան բույսերից, ցանում են լյուցերն կամ մաշ: Աշնանը լերը ցանված խոտաբույսը հանում է վորոշ բարձրութեան՝ հողը վարում են: Արմատախիլ արված արմատները և ցողունները փռում են և հողին տալիս բավականաչափ սննդանյութեր: Կանաչով հնարավոր է միայն այն դեպքերում, յեթե բամբակը ցանվում է աչպիսի բույսերից հետո, վորոնք քաղվում են ամառը ոգտատու ամսից վոչ ուշ:

Վերջապես անհրաժեշտ է մատնանշել պարարտացման նաև մի ձևի վրա, այն է լյուցերնա կամ եսպարցեա ցանելու միջոցով: Այդ բույսերը հաճախութուն ունեն վոչ միայն չպահասացնել հողից ա-


ղտի սլաշորը, այլ ընդհանրապես նրանք ափսոսանքով են այդ պաշարը: Այդ բացատրվում է նրանով, վոր լյուցերնայի և եսպարցեաի արմատների վրա ազդում են մանր, հոտաբակ աչքով անտեսանելի ելակներ, վորոնք բակտերիաներ են կոչվում. նրանք ընդունակութուն ունեն ողից ազատ կլանելու (վորտեղ ազոտը մեծ քանակութեամբ է լինում) և հավաքելու, այդ արմատների վրա գոյացած մանր պաշարների մեջ (տես նկար № 4): Նեթե դաշտում յերեք տարի անընդհատ ցանվի լյուցերնա կամ եսպարցե, նա ազոտի մեծ պաշար կհավաքի: Մի ժամանակ այդ բույսերի արմատների փտումից լերեք տարվա ընթացքում հնավաքվի մեծ քանակութեամբ ամենաարժեքավոր մի նյութ, վորը կոչվում է հումուս, հումուսը բույսի համար իր մեջ պարունակում է մեծ քանակութեամբ ռնուսը, և բացի դրանից՝ հողի փոխացած մասնիկները միացնելով իրար տալիս է նրան անհրաժեշտ կադմութունը (ստրուկտուրան):

Աչպիսի բազմամյա բույսերի ցանելը, ինչպիսին են լյուցերնան և եսպարցեաը հսկայական ծախսակութուն ունի բամբակի բերքատուութեան համար, հետևվապես ամեն անգամ, վորտեղ հնարավորութուն կա ոգտագործելու ջրերը այդ խոտաբույսերի համար, յեթե, իհարկե, նա բավարարում է բամբակի դաշտերին՝ անպայման պետք է ցանել նրանց:

Վորպեսզի ավելի ճիշտ կերպով դնահատած լինենք այդ բազմամյա բույսերի ցանքի աված արդյունքները, պետք է ավելացնենք նաև այն, վոր նրանք հնարավորութուն են տալիս կենդանաբուծութեան զարգացմանը և դրանով ավելացնում նմանապես դոմադրի պաշարը:

ИНСТИТУТ  
ПОСТОВОДЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР





Նկ. 4 Լոբաբուխի արմատը (եռաբուխ), վորի վրա յերևում են ուռուցիկ մասերը (հանգույցներ), վորտեղ ապրում են ողից ազոա հալածող բակտերիաները:


Պարարտացումը և վերը թված խոտաբույսերի ցանելը առաջին հերթին պետք է կատարվի կոլխոզ-

ների կողմից, վորոնք գյուղատնտեսական ձեռնարկումների ալդ կարևորագույն մասում պետք է դրավան առաջավոր դիրքերը:

### ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆԺԸ

Բամբակը կարելի է ցանել շաղաքան և շարքերով: Առաջին դեպքում սերմը ցրվում են դաշտում ձեռքով, իսկ հետո տափանում:

Շարքային ցանքը կատարվում է առանձին տեսակի միաշարք, չերկշարք և յեռաշարք շարքացան մեքենաներով (տես նկարներ № 5 և № 6): Շարքերը գտնվում են մեկը մյուսից 70—90 սանտիմետր հեռավորության վրա:



Նկար № 5. Միաշարք բամբակացան մեքենա «Պեկորդ» մարկայի:

Ցանքի վերահիշյալ ձևերից պետք է զերադասել շարքայինին հետևյալ նկատառումներով:

1) Շարքացան մեքենաներով ցանած սերմերը



դրվում են հողի մեջ մեքենայով միկնուլն խորութեամբ և համահավասար կերպով ծածկվում հողով: Իսկ շաղապանի դեպքում օերմերը ընկնում են տարբեր խորութեան մեջ և ծլում են տարբեր ժամանակ, վերից ցանքը խայտաբղետ աեսք է ընդունում:

2) Բույսի հետագա զարգացման ընթացքում դուրանում է մոլախոտերի հետ պայքարելը, վերովհետև շաղախի միջև հնարավորություն է լինում ոգտագործել քաղհոտնեւս համար ձիաքարշ - արակտորաքարշ մեքենաներ: Շաղապանի դեպքում քախհանելը ավելի դժվար է, վերովհետև այդ կարելի չէ կատարել միայն ձեռքով:

3) Շարքով դասավորված թփերը բավականաչափ ընդարձակ տարածություններ ունեն իրենց արմատները զարգացնելու համար և մեկը մյուսի համար չի փակում արեգակի ճառագայթները, վրոնք շատ անհրաժեշտ են բույսի աճման համար: Շաղապանի դեպքում չափազանց դժվար է թփերի կանոնավոր դասավորումը և դա խանդարում է նորմալ աճմանը:

4) Հողը ջրելուց հետո նրա մակերեսը սովորաբար ծածկվում է հաստ կեղեվով, վորը դժվարությամբ է անցկացնում ողը բույսի արմատների շնչառության համար: Շարքացանի ժամանակ այդ կեղեղը արագ և հեշտ կերպով կարելի չէ փշրել ձիաքարշ կամ արակտորաքարշ կուլտիվատորով: Շաղապանի ժամանակ այդ ախատանքը կարելի չէ կատարել միմիայն ձեռքով և դրա համար ամեն անգամ մեկ հեկտար տարածության համար գործադրվում է 15—30 մարդու աշխատանք:

Այդպիսով շարքացանը ամենակարևոր միջոցներից մեկն է բամբակի բերքատվության բարձրացման

համար, և պետք է ձգտել նրան, վորպեսզի մոտակատարիների ընթացքում ամենուրեք անցնեն շարքային ցանքի: 1931 թվին բամբակի շարքային ցանքը պետք կատարվի ամբողջ 233,000 հեկտար տարածության վրա:

Վոչ պակաս խոշոր նշանակություն ունի բամբակի բերքատվության բարձրացման համար նաև ցանֆի ժամանակը:

Յեթն բամբակի ցանքը շատ վաղ կատարվի - յերբ հողի ջերմաստիճանը դեռևս չի հասել անհրաժեշտ բարձրության, այդ դեպքում սերմի ծլելը կատարվում է թույլ և վոչ համահավասար չափով, սերմի մեծ մասը փչանում են վլասատուների կողմից կամ փթում, ցողունները միատեսակ չեն լինում և բույսը ընդհանրապես թույլ է լինում:

Բացի դրանից վաղաժամ ցանքի դեպքում ցողունները կարող են յենթարկվել ցրտահարության և փչանան:

Ուշացված ցանքի ժամանակ բամբակի հասունանալը ուշանում է, կնդուղներից շատերը չեն հասունանում և չեն բացվում:

Այդպիսի ուշացված ցանքերը սովորաբար լենթարկվում են աշնանային ցրտերին՝ վորոնք մեծապես ազդում են բամբակի վորակի և քանակի վրա:

Հետևապես, վորտեսպի լավ արդյունքներ ստացվեն, անհրաժեշտ է ճիշտ կերպով ընտրել ցանքի ժամանակը:

Փորձերը ցույց են տվել, վոր բամբակի սերմերի ծլումը տեղի չէ ունենում այն ժամանակ, յերբ հողի ջերմաստիճանը հասնում է 14 աստիճանի ըստ Յելսինսկի ջերմաչափի, իսկ ամենաբարենպաստ ջերմաստի-



ճանը բամբակի համար համարվում է 25 աստիճանը:

Յեկնելով այդ հանգամանքից Անդրկովկասի բամբակացան շրջաններում բամբակի ցանքի համար ամենից բարենպաստ շրջանը պետք է համարել ապրիլի 20-ից մինչև մայիսի 10-ը: Մակալն տարբեր շրջանների համար այդ ժամկետից հնարավոր են շեղումներ այս կամ այն կողմը:

Վորպեսզի արագացնել բամբակի սերմերի ծլելը և փազանց ոգտավետ եցանելուց առաջ սերմերը թրջել, դրա համար սերմերով լիքը պարկը 2 օրով դրվում է ջրի մեջ: Թրջված սերմերը պետք է միմիայն ուռճանան, սակայն վոչ մի դեպքում թուլլ չպիտի տալ նրանց ծլելու, վորովհետև ցանելու ժամանակ քնքուշ ծիլերը կարող են կոտրվել:

### ԲՈՒՅՍԻ ԽՆԱՄՔԸ


Յերբ կերևան բամբակենու ծիլերը, անհրաժեշտ է շարունակ հետեել նրանց և իր ժամանակին ձեռք առնել անհրաժեշտ միջոցները նրա հետագա զարգացումը հեշտացնելու համար:

Առաջին ասխատանքը, վորը պետք է կատարել բամբակենու ծիլերի չերևալուց հետո, դա հողի փխրացումն է և ապա ծիլերի նոսրացումը. այսինքն բոլոր ավելորդ ծիլերի պոկրտելը, վորոնք խանգարում են և անտեղի պակասեցնում հողի սննդանյութերը:

Յուրաքանչյուր բնում պետք է թողնել միայն ամենաուժեղ բույսերից 2-3 հատ և այնպես անել, վոր բների հեռավորությունը մեկը մյուսից լինի մոտավորապես 35—40 սանտիմետր:

Յեկնող ասխատանքը դա մուլախոտերի վոչնչացնելն է և շարքերի միջև հողի փխրացումը: Այդ աշխատանքը պետք է ջրելուց հետո կատարել, յերբ հողի վերին շերտը սկսում է չորանալ:

Մուլախոտերը խեղդում են և շուք են գցում բամբակենու վրա, հետևապես նրանց վոչնչացնելու անհրաժեշտությունը միանգամայն պարզ է:




ՆՊՂԻ ՁԵ Թ. «Պլանետ» սխտեմի ձիաքարշ հինգթիականի կուլափառոր, իր պահեստի մասերով և լծակներով, վորոնցով կարելի է փոփոխել բաղհանվող տարածություն լայնությունը և խորությունը:


Միջարքային տարածության փխրացումը նույնպես կարևոր նշանակություն ունի բույսի զարգացման համար, վորովհետև հողի մակերևույթի փխրացնելու շնորհիվ ողի մուտքը հողի մեջ հեշտանում է, վորն և անհրաժեշտ է բամբակենու արմատների համար: Բացի դրանից հողի վերին շերտի փխրացումը ջրելուց հետո խոչնդոտ է հանդիսանում ջրի արագ գոլորշիացմանը և կարող է խոշոր չափով կրճատել հաճախակի ջրելու պահանջը:



Շարքերի միջև բաւած մուխոտների վաշնչացումը և հողի փխրացումը կարելի լին կատարել ձիաքարշ կամ տրակտորաքարշ հատուկ կուլտիվատորների միջոցով (տես նկարներ № 6, 7 և 8):



Նկար № 7. Կուլտիվատոր «Պլանետ» սխեմայի վրը պատրաստված և բամբակի դաշտի միջարքային տարածությունները վարելու համար:



Նկար № 8. Կուլտիվատոր «Պլանետ» սխեմայի, վրը պատրաստված և ջրհուռ ժամանակ ակոսներ անցկացնելու համար:

Ձեռքի աշխատանքի գործադրումը պահանջում է միմիայն շարքերի, այսինքն թիերի միջև չեղած տա-

րածութիւնը քաղհանելու ժամանակ, վորովհետև այդ աշխատանքը մեքենան կատարել չի կարող:

Միջարքային տարածութեան քաղհանելը և փրկաքցնելը ամառվա ընթացքում պետք է կատարել չերեք-չորս անգամ: Յեթե դաշտը աշնանը վարած և չեղել լավ, և մուխոտների մի մասը նախքան ցանքը վաշնչացված են, ապա բավական կլինի դաշտը քաղհանել և փխրացնել միմիայն չերեք անգամ: Յեթե աշնանը դաշտ չի հերկված, ապա կարիք կլինի քաղհանել մինչև իսկ հինգ անգամ:

Բամբակի շարքային ցանքը և միջարքային տարածութեան քաղհանելը մինչև իսկ ձիաքարշ կուլտիվատորով չափազանց հեշտացնում և կծանացնում է այդ աշխատանքները:

Ձիաքարշ կուլտիվատորը, վորին աշխատեցնելու համար հորկավոր են մեկ հասակավոր բանվոր, մեկ անչափահաս չերեխա և մեկ ձի, իր կատարած աշխատանքով կարող է փոխարինել հողուլազներով զինված 10 բանվորի:

Ամառվա ընթացքում չերեք անգամ քաղհանելու դեպքում մեկ կուլտիվատորը լուրաքանչյուր հեկտարի համար կտա 25 բանվորական ուժի խնայողութիւն:

Բամբակի բերքատվութեան բարձրացրաման համար ձեռնարկած բոլոր միջոցների թվում քաղհանելը և միջարքային տարածութեան փխրացնելը խոշոր նշանակութիւն ունի, և վստահ կերպով կարելի լին ասել, վոր Անդրկովկասում բամբակի դաշտերի ցածր բերքատվութիւնը մեծապէս կախված է բամբակի դաշտի վատ խնամուելուց և շարքերի մեջ չեղած տարածութիւնը իր ժամանակից չքաղհանելուց և չփխրացնելուց:



## ՔԱՍԲԱԿԻ ԴԱՇՏԻ ՎՈՌՈԳՈՒՄԸ

Քամբակի գաշտի կանոնավոր և իբր ժամանակին կատարված վոռոգումից կախված և նրա բերքատուր-վածքից, Հետեապես այդ աշխատանքների կատա-մանը պետք է վերաբերվել ուշադրութեամբ և հմտորեն:

Յերկրորդ վոռոգումը (անաջին վոռոգման մասին արդեն խոսել ենք վերը) բամբակի ու ծխելիի լեռ-վալուց հետո: Դաշտն յերկրորդ անգամ ջրելու համար չպետք և չուտպել, այլ ընդհակառակը, պետք և աշխա-տել վորջան հնարավոր և հետաձգել այդ, վորպեսզի հնարավորութիւն տրվի յերիտասարդ բույսին ջրի համար փնտրումներ կատարելու շնորհիվ ավելի ուժեղ կերպով զարգացնի իր արմատները: Սակայն չպետք և միանգամայն անուշադրութեան մատնել ջրելու ժամա-նակը. վորից բույսը կարող և թուլանալ: Յերկրորդ անգամ ջրելու ամենահարմար ժամանակը ընտրվում և հետևյալ յերկու հատկանիշներով՝ ա) բույսի տերե-ները թուլանում և կախ են ընկնում, նրա կանաչ գույնը մգանում և, բ) հողից պոկած բամբակենու արմատը կոպտեցիկ է լինում:

Յերկրորդ վոռոգման ժամանակ կարիք չկա չա-փազանց շատ ջրելու, վորովհետև բույսը դեռ փոքր և և նրա գործողրած ջրի քանակը աննշան և, Վոր-պեսզի ջուրը ավելի յերկար ժամանակ մնա հողի մեջ անհրաժեշտ և ջրելուց հետո միջարքային տարածու-թիւնները փխրացնել ձիաքարը կամ տրակտորաքարը կուտիվատորով:

Հողի մակերևութի 6—8 ստնտիմետր խորու-թեամբ փխրացնելը չի թաղնում վար ջուրը արագ գո-

լորշիանա և զբաժնով յերկարացնում և ժամանակը մինչև հաջորդ վոռոգումը:

Սովորաբար յերկրորդ վոռոգումից 25 որ հետո կատարվում և յերրորդ վոռոգումը, վորին հաջորդում և միջարքային տարածութեան յերկրորդ փխրացումը:

Դաշտի յերրորդ վոռոգումից և միջարքային տա-րածութիւնների կուտիվատորի միջոցով յերկրորդ անգամ կատարված փխրացումից հետո սկսվում և բամբակենու ծաղկումը, վորի ընթացքում բամբակե-նին ավելի մեծ չափով և զգում ջրի պահանջը:

Դրա համար, յերկրորդ վոռոգումից հետո, բամ-բակենու ծաղկելու շրջանում դաշտը նորից պետք և ջրվի մեկ կամ յերկու անգամ և մեկ անգամ լես փըխ-րացվի: Յեթե դաշտը այնպես խիտ և կանաչել, վոր հնարավորութիւն չկա աշխատացնել ձիաքարը կու-տիվատորը, առանց վնասելու բամբակենու թփերին, ապա այդ աշխատանքները պետք և ձեռքով կատա-րել:

Յուրաքանչյուր լավ բամբակացան անշեղ կեր-պով պետք և ղեկավարվի հետեյալ հիմնական կանո-նոներով, ամեն անգամ դաշտը ջրելուց հետո միջար-քային տարածութիւնները անպայման պետք և փըխ-րացնել կուտիվատորով կամ ձեռքով, վորովհետև այդ չկատարելու դեպքում հողի յերեսին գոյանում և կոշտ կեղև, վորը խանգարում և ողի ներս թափանցելուն, և հողը սկսում և արագորեն չորանալ:

Յերբ ծաղիկը թափվում և սկսվում և կնգուղնե-րի հասունանալը, այլև ջրելու կարիք չկա, ընդհա-կառակը, ավելորդ ջրելը այդ շրջանում ուշացնում և կնգուղների հասունանալը և իջեցնում արագ բամ-



լակի վորակը: Մի շարք շրջաններում ստիպված են լինում վերը բերած ցուցմունքներից շեղվել, որինակ վստողուն անհրաժեշտ է լինում կատարել վեց-յոթ անգամ փոքր ընդմիջումներով: Այդ տեղի և ունենում այնպիսի շրջաններում, վորտեղ հողը և նրա լանթաշերտը ուժեղ թափանցելիություն ունեն, զրա հետեւանքով ջուրը արագութեամբ ներս է ծծվում հողի խորքը: Սակայն և այդ շրջաններում հողի խոր վերելու և միջաբերան տարածությունների կանոնավոր կերպով փխրացնելու դեպքում կարելի չէ տնտեսել ջրի գործածումը և պակասացնել վստողման չափը:

## ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԱՌՆՎԵԼԻՔ ԲՈԼՈՐ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՄ- ՓՈՓՈԽՄԱՆ

Սույն գրքուկի նախորդ գլուխներում մենք առանձին կերպով կանգ առանք այն միջոցների վրա, վորոնք անհրաժեշտ են բամբակի բերքատվությունը բարձրացնելու համար:

Այդ միջոցների լրիվ ցուցակը հետևյալն է.

- 1) Սոր կերպով կատարված աշխատավար (ցել):
- 2) Ձմեռային արաթ:
- 3) Յանքից առաջ դաշտի փխրացումը կուլտիվատորով կամ սկավառակային փոցխով՝ առանց հողի շերտի շրջելուն
- 4) Դաշտի պարարտացումը գոմաղբով, կոմպոստով և հանքային աղերով: Կանաչով պարարտացումը: Բազմամյա լոբաբույսերի ցանելը:
- 5) Շարքացանը: Յանքի վերջացնելը մինչև սեպտեմբերի 10-ը

6) Յանքի վստողումը:

7) Դաշտի ժամանակին նորարացումը, բոլոր տեսակի ցանքի (ինչպես շարքացան նույնպես և շաղաքան) քաղհանելը և հողի մակերեսի փխրացնելը ամառվա յուրաքանչյուր վստողումից հետո:

Այս մատնանշած միջոցների իրագործումը բոլորակալ բերքատվությունը շատ անգամ ավելի կբարձրացնի գոյություն ունեցող բերքատվության համեմատ: Միջոցների, ձեռնարկումների այս ծրագիրը կարելի է համարել լրիվ (մաքսիմալ ծրագիր):

## ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄ

Սակայն մենք հնարավորություն չունենք 1931 թվի դարնանը այդ բոլոր միջոցները մատչելի դարձնել բոլոր բամբակացանների համար:

Որինակ առնանալարք (ցելը) հնարավոր չէ կատարել այն հողերում, վորտեղ նախորդ տարում նույնպես բամբակ է ցանած լինել և դարնան նրանք նույնպես հատկացված են բամբակ ցանելու համար: Բոլոր բամբակի դաշտեր պարարտացված համար մենք դեռևս անհրաժեշտ քանակությամբ պարարտանյութեր չունենք: Ձմեռային արաթը հնարավոր է միայն այն հողամասերում, վորտեղ աշխատավար (ցել) է արված:

Այդ պատճառով այդպիսի ձեռնարկումները, ինչպես որինակ՝ աշխատավարը, ձմեռային արաթը, պարարտացումը, 1931 թվում հնարավոր է իրագործել մինչև բամբակացանի համար նախատեսված ամբողջ 250 հազար հեկտար տարածություն վրա, այլ միմիայն հետևյալ չափերով:



1) Առնամաղար (ցոր) նախատեսված է 80,000 հեկտար տարածության վրա, վերից Ադրբեջանում 63,000 հեկտար, Հայաստանում 10,000 հեկտար և Վրաստանում 5,000 հեկտար:

2) Զմեռային առաքր նախատեսված է 61,000 հեկտար, վորից Ադրբեջանում 60,000 հեկտար, Հայաստանում 1,000 հեկտար, և Վրաստանում 500 հեկտար:

3) Պարաբացումը նախատեսված է 50,000 հեկտար, վորից Ադրբեջանում 40,000 հեկտար, Հայաստանում 7,000 հեկտար և Վրաստանում 3,000 հեկտար:

Մաքսիմալ ծրագրում նախատեսված մնացած բոլոր ձեռնարկումները 1931 թվի ընթացքում անպայմանորեն պետք է իրագործվեն բոլոր բաժնեկցաների կողմից: Այդ ձեռնարկումները կազմում են այսպես կոչված ագրոմիսիոններ:

Այդպիսով 1931 թվի ընթացքում յուրաքանչյուր բաժնեկցան իր տնտեսության մեջ պետք է մտցնի հետևյալ բարեփոխությունները:

1) Վաղ զարնանը (մարտի սկզբին) բաժնեկցի համար դաշտը պետք է վարի գութանով ամբողջ խորությամբ:

2) Ցանքից առաջ պետք է կատարի հողի փերի-բացում 8 սանտիմետր խորությամբ (2 վերշոկ):

3) Դաշտը ցանի շարժացան:

4) Ցանքը վերջացնի մայիսի 10-ից վոչ ուշ:

5) Ցանքը իր ժամանակին նստրացնի:

6) Մոլախոտերը քաղհանել և փերացնել միջլար-քալին տարածությունները:

7) Դաշտը ջրել վորոշված ժամանակներին և ջրերը առաջ սահմանված նորմաներով:

8) Շուրաքանչյուր վաղգումից հետո դաշտի մեկերևույթը փերացնել:

Ագրոմիսիոնի մեջ մտնող բոլոր միջոցների աղբյուրի կատարման դեպքում մենք կարող ենք վրատա լինել, վոր Անդրկովկասում բաժնեկցի բերքառու-վորությունը բավականին չափով կբարձրանա: Հետևապես բաժնեկցանների դիտակից մասի, առաջին հերթին կոլխոզների, գյուղի տմբողջ ակտիվի և համապատասխան կազմակերպությունների ամբողջ ուժը պետք է ուղղված լինի նրան, վորպեսզի 1931 թվի զարնանը ագրոմիսիոնում իրագործվի լրիվ չափով ամբողջ 250 հազար հեկտար տարածության վրա:

ԻՆՋՊԵՍ ՈԳՆԵԼ ԲԱՄԲԱԿԱՍԱՆՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ԱՌԱ-  
ԶԱԴՐԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ, ՎՈՐՆ ԱՆԸ-  
ՐԱԺԵՇՏ Ե ԲԵՐԲԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ԴՆԱԿԱՑՈՑՆԵՍԱԿԱՆ ՄԵԲԵՆԱՆԵՐ ԵՎ ԲԱԳԱՎ ՈՒԾԸ

Վորպեսզի լավացնենք հողի մշակումը ցանքը և բույսի խնամքը անհրաժեշտ է ունենալ լավ գութան-ներ, սկավառակային փոցիներ, կուլտիվատորներ, բաժնեկցան մեքենաներ, հողը փերացնող մեքենաներ և այլն: Փայտե արորով և փայտե փոցիով շատ բան չի կարելի ունել:

Վորպեսզի այդ բոլոր մեքենաները աշխատեն անհրաժեշտ է քաշող ուժ, այսինքն կամ բանող անասուն կամ տրակտոր:

Հնգամյակի առաջին լերկու տարիների ընթացքում գյուղատնտեսական մեքենաների տրտադրանքը Խորհրդային Միության մեջ հասել է այնպիսի խոշոր



չափերի, վոր բամբակացան շրջանները կողմից դուրս  
դառնալու հարևոր մեքենաների մեջ զգալիոր  
պահանջը լրիվ չափով կբավարարվի:

Սորհրդային իշխանությունը ձեռք է առել բոլոր  
միջոցները, վորպեսզի ապահովի մեքենաներով վոչ թե  
միայն ագրոմինիստների այլ և ագրոմաքսիստների զգալի  
մասի իրազորումը:

Բացի դրանից պետությունն ինքը կադա-  
կերպում է կայաններ իրենց սրահատորներով և կատա-  
րելագործված մեքենաներով, վորոնք բամբակացան-  
ների հետ կնքած պայմանագրերի համաձայն կատա-  
րում են դաշտային աշխատանքների զգալի մասը:

Ամբողջ խնդիրը նրանումն է թե ինչպես ոգտա-  
գործել այդ մեքենաները բամբակի դաշտերում:

Մանր, անհատ տնտեսություններում մինչև իսկ  
գութանը չի ոգտագործվում լրիվ չափով, նմանապես  
այնպիսի մեքենաները, ինչպիսին են սկավառակային  
փոցխերը, բամբակացան մեքենան, կուլտիվատորը,  
քաղհանող մեքենան և այլն ոգտագործվում են միմիայն  
<sup>1</sup>/<sub>10</sub>-ի չափով:

Կատարենք հասարակ հաշվառք: Բամբակի միջակ  
ցանքը կարելի չէ համարել 1-2 հեկտարը մեկ տնտե-  
սության համար: «OK» մարկի լավ գութանը աշնան  
կամ զարնան ընթացքում կարող է վարել 15 հեկտար,  
հետևապես փոքր տնտեսության մեջ հնարավոր է սգ-  
տագործել գութանը իր բեռնավորման միայն <sup>1</sup>/<sub>10</sub>-ի  
չափով: Սկավառակային փոցխը, թեկուզ ամենափոքրը,  
վորը դարձան ընթացքում կարող է մշակել 20 հեկտա-  
րից ավել տարածություն անհատ տնտեսության մեջ  
կոդագործվի միմիայն իրեն <sup>1</sup>/<sub>10</sub>—<sup>1</sup>/<sub>30</sub>-ի մասով: Մեկ-

տարածի բամբակացան մեքենան կարող է ցանել ավելի  
քան 20 հեկտար, սակայն անհատ բամբակացանը նրան  
պետք է սգտագործի միմիայն, 1-2 հեկտար ցանելու  
համար:

Բացի դրանից բոլոր այդ մեքենաները բավա-  
նին թանկարժեք են: Նրանց լրիվ կոմպլեկտը արժե  
մոտավորապես 250 ռուբլի: Մանր անհատ բամբակա-  
ցանը, վորը ցանում է ընդամենը 1-2 հեկտար ան-  
կարող է կատարել այդ ծախսը:

Իրությունը ավելի վատ է քաջող ուժի նկատ-  
մամբ. գութանի համար անհրաժեշտ է ունենալ չերեք  
գութեք յեղ կամ յերեք ձի: Բայց միթե փոքր ու ան-  
հատ տնտեսությունը կարող է ունենալ այդ քանակու-  
թյամբ անասուններ: Այս բոլորը մեկ բերում է միայն  
մի չեղրակացություն: Բամբակացանային շրջաններում  
կատարելագործված մեքենաների տարածման համար  
գոյություն ունի միայն մեկ միջոց՝ միացնել բոլոր  
անհատական չքավոր և միջակ տնտեսություններին  
կոլլեկտիվում:

Պետություն կողմից կառուցվող մեքենատրակտո-  
րային կայանների համար նույնպես դժվար է ոգնություն  
հասնել անհատ տնտեսություններին, վորովհետև տրակ-  
տորի աշխատանքները չի կարելի ճիշտ կերպով դա-  
սավորել տարբեր տեղերով ցրված դաշտի մասնակտոր-  
ների վրա:

Պարզ է, վոր գյուղացիական անհատ տնտեսու-  
թյունների կողմից բամբակի ցանքի բարելավման հա-  
մար նախատեսված ամբողջ ծրագրի իրագործումը  
չափազանց դժվար կլինի, մինչև վոր նրանք չմիանան  
կոլլեկտիվում, կամ թե չեն ընկերություններ կազմա-



կերպին միատեսական միջոցներով գյուղատնտեսական մեքենաներ գնելու և ոգտագործելու համար:

Ագրոմինիմումը կատարելու համար անհրաժեշտ մեքենաները (գութաններ, փոցիներ, բամբակացան մեքենաներ, կուլտիվատորներ և այլն) գյուղացիները կարող են գնել կազմելով խմբակներ 5—10 հոգուց բաղկացած:

Ջրավորակա և բատրակային տնտեսությունները, վորոնց համար այդ միջոցն ել ուժերից վեր ե մեքենաները կստանան ոգտագործելու համար (պրոկատով) գյուղական ընկերության մեքենայական բազայից:

Մեքենատրակտորային կայանները նույնպես կարող են մշակել անհատ տնտեսությունների հողամասերը, սակայն միայն այն դեպքում լերբ այդ տնտեսությունները կմիացնեն իրենց ցրված հողամասերը մեկ ընդհանուր դաշտում:

## ՍԵՐՄԻ ՅԵՎ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Բոլոր բամբակացանները պետությունից ստանում են անհրաժեշտ քանակությամբ ստուգված և գտված սերմեր, այնպես վոր այդ բանում բոլոր բամբակացանները լրիվ չափով ապահովված են:

Պարտաճանրեքը պետության կողմից բաց են թողնվում ծրագրով նախատեսված պարարտացման լինթակա 50.000 հեկտար թարածության համար արտոնյալ պայմաններով, այսինքն խնդրարժեքից ավելի քան ցածր գներով, ծախսելով յուրաքանչյուր հեկտարի վրա 38 ռուբլի:

3.500 հեկտար ցանքների համար պարարտացման թեր բաց զիտի թողնվեն ձրիաբար:

## ՎՈՌՈԳՈՒՄԸ

Վորպեսզի բամբակի ցանքերը ապահոված լինեն ջրով, պետությունը հսկայական միջոցներ ե ծախսում վորոգման նոր սիստեմներ կառուցելու համար, ջրմուղների կառուցման ջրհորների (քյահրիզների) նորոգման և այլն:

Սակայն գլխավոր խնդիրը, վորը պետք ե լուծեն իրենք բամբակացանները, դա նրանց տրամադրած ջրի ձիշտ և կանոնավոր ոգտագործումն ե և վորոգման առումների նորոգումն ու մաքրումն: Պետք ե վերջ տալ ջրի հափշտակման ձևերին, բամբակի դաշտին պետք ե ջուր տալ այնքան, վորքան անհրաժեշտ ե և վոր թե անտեղի ծախսել ջուրը վորոգելով դաշտերը չափից դուրս շատ, ջուրը պետք ե ոգտագործել նաե գիշերը, վորպեսզի ջուրը անոգուտ չհոսի: Յուրաքանչյուր գյուղում պետք ե կազմակերպվի ջրոգտագործման ընկերություններ (մեխորատիվ ընկերություններ) և ջրի ոգտագործման ու բախշման դեկավարությունը պետք ե հանձնարարել գյուղի համապատասխան ընկերությանը:

Ջրի կանոնավոր ոգտագործումն և բամբակի դաշտերի ջրով ապահովելը բամբակի բերքատվության բարձրացման հիմնական պայմաններից մեկն ե, հետեվապես անհրաժեշտ ե ջրջանների և գյուղերի ամբողջ ուժերը լարել այդ ամենալուրջ կամպանիայի իրագործման համար:



## ՅԵԶՐԱԿԱՑՈՒՔՑՈՒՆ

Վորպեսզի, հաջողութեամբ իրագործենք բամբակի բերքատուութեան բոլոր միջոցները, վորպեսզի կատարած լինենք ազրոմինիմումը և ձեռնարկումներ յամբողջ ծրագիրը, գլխավոր ուշադրութեանը պետք և կենտրոնացնենք անհատ գյուղացիական չքավորական և միջակային տնտեսութեաններ ի կոլխոզներում միացնելու վրա:

Միայն կոլխոզներում մենք կարող ենք ունենալ այն բոլոր պայմանները, վորոնք լրիվ չափով կապահովեն բամբակագործութեան բարելավման ամբողջ ծրագիրը:

Հետևապես բամբակի բերքատուութեան բարձրացման և ազրոմինիմումի իրագործման համար մզվող պայքարը պետք և ընթանա հետևյալ լոգունդի տակ.

Բամբակացան ճնշեսութիւնների կոլեկտիւացումը բամբակի բերեացւոյրան բարձրացման համար մզվող պայքարի հաղթութեան գրավականն է:

ՀԱՅԵՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ՄԱՐԿԱ

ԳԻՆԸ 7 ԿՊՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0280602